# Նախագծային աշխատանք

Առարկա՝ Հայոց լեզու

Դասարան՝ 9-րդ

Ուսուցիչ՝ Անի Ազատյան

Աշխատանքի թեմա՝ Լեզվական սխալներ

| |
|---|
| Նախագծային աշխատանքի պահանջ |
| Գտնել և խմբավորել լեզվական տարաբնույթ սխալները |
| Նախագծյնի աշխատանքի նպատակը |
| • Ինքնուրույն գործունեության խթանում<br>• Լեզվական գրագիտության բարձրացում<br>• Հետազոտական – վերլուծական կարողությունների և հմտությունների զարգացում |
| Նախագծի ազդեցության ուղղությունները |
| • Համագործակցային հմտություններ<br>• Քննադատական մտածողություն<br>• Աշխատանքի ներկայացման մշակույթ |
| Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը |
| . Աշխատանքի բաղադրիչները՝ գրավոր և բանավոր տեքստ, ինֆոգրաֆիկ սահիկաշար (Canva ) կամ տեսաֆիլմ:<br>Բովանդակությունը՝ քերականական, ոճական, բառագործածության և այլ սխալներ, դրանց պատճառների և հետևանքների վերլուծություն, ներկայացված խնդիրների լուծման ուղիներ:<br>Աշխատանքը ներկայացվելու է բանավոր: |
| Աշխատանքի փուլերի հաջորդականություն |
| 1. Ուսումնասիրել մամուլի, հեռուստատեսության , սոցկայքերի, միջավայրի լեզուն , դուրս բերել լեզվական տարաբնույթ սխալները:<br>2. Խմբավորել և դասակարգել հավաքված նյութը:<br>3. Ձևակերպել խնդրի առաջացման պատճառները, դրա վրա ազդող գործոնները:<br>4. Առաջարկել խնդրի լուծման եղանակներ:<br>5. Պատրաստել տեսանյութ կամ սահիկաշար: |
| |
| Աշխատանքի տևողությունը ՝ 05.04.2022 թ.- 05.05.2022թ. |

**Նախագծային աշխատանքի գնահատման սյունակաշար** 20 **միավոր** / 10

| | 9-10**մ**. | 5-6**մ**. | 4**մ**. |
|---|---|---|---|
| **Կառուցվածք և բովանդակություն** | Ամբողջովին պահպանված են կառուցվածքային և ծավալային չափանիշները:<br><br>Դասակարգումը կատարվել է ճիշտ , առկա են խորքային և ճիշտ մեկնաբանություններ: | Կառուցվածքային կամ ծավալային չափանիշներից կան որոշ շեղումներ:<br><br>Դասակարգումը կատարվել է ճիշտ , Մեկնաբանություններում կան որոշ թերացումներ: | Կառուցվածքային կամ ծավալային չափանիշներից կան բավականին շեղումներ:<br><br>Դասակարգումներում և մեկնաբանություններում առկա են նկատելի սխալներ: |
| **Գրագիտություն** | 5-6**մ**. | 3-4**մ**. | 1-2 **մ**. |
| | Բանավոր և գրավոր խոսքը կառուցված է գրագետ, սխալներ չկան: | Բանավոր և գրավոր խոսքում առկա են որոշ սխալներ: | Խոսքում նկատելիորեն գերակշռում են սխալները: |
| **Ժամկետ** | 4**մ**. | 2-3 **մ**. | 1**մ**. |
| | Աշխատանքը կատարվել և ներկայացվել է սահմանված ժամկետներին համապատասխան: | Աշխատանքը ներկայացվել է սահմանված ժամկետից որոշակի շեղումներով: | Աշխատանքը ներկայացվել է սահմանված ժամկետներից զգալի շեղումներով: |